ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶ
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔ

ք. Աբովյան **19/01/2023**

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 1
ԱՎԱԳԱՆՈՒ ԱՐՏԱՀԵՐԹ ՆԻՍՏԻ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 20 անդամներ:

Բացակա էին՝ Էդուարդ Բաբայանը, Գոռ Գալստյանը, Տիգրան Գեղամյանը, Էմիլ Հարությունյանը, Նազիկ Հարությունյանը, Նորայր Միքայելյանը, Գևորգ Պողոսյանը

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝
Աննա Զոբանյանը, Եղիշե Ավետիսյանը

Նիստը վարում էր Համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ՝ Դավիթ Զարոյանը

Նիստը արձանագրում էր Աշխատակազմի քարտուղար՝ Վանիկ Բաբաջանյանը

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2023 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 19-Ի ԱՐՏԱՀԵՐԹ ԱՌԱՋԻՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ՎԱՆԻԿ ԲԱԲԱՋԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 14-րդ և 65-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ղեկավարի 2022 թվականի դեկտեմբերի 19-ի N 638 կարգադրության, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***
1. Հաստատել Աբովյան համայնքի ավագանու 2023 թվականի հունվարի 19-ի արտահերթ առաջին նիստի հետևյալ օրակարգը.
1) Կոտայքի մարզի Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի N 199-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին.
2) Աբովյան համայնքի «Աբովյան քաղաքի թիվ 10 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը լուծարելու մասին.
3) Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող հողամասերի վրա ինքնակամ կառուցված շինություններն օտարելու կամ վարձակալության իրավունքով տրամադրելու մասին.
4) Աբովյան համայնքի Պտղնի գյուղում գտնվող 07-054-0331-0079 կադաստրային ծածկագրով, 0.11697 հեկտար մակերեսով և 07-054-0331 կադաստրային ծածկագրից, 0.00408 հեկտար մակերեսով հողամասերի նպատակային նշանակությունը փոփոխելու

մասին.
5) Աբովյան համայնքի «Մայակովսկի գյուղի «Զեփյուռ» մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանն անհատույց օգտագործման իրավունքով անշարժ գույք տրամադրելու մասին:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունման պահից:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 01-Ա/

Լսեցին
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի N 199-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 5-րդ կետի, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-34-րդ հոդվածների, Աբովյան համայնքի ղեկավարի 2022 թվականի դեկտեմբերի 19-ի N 638 կարգադրության, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***
1. Աբովյան համայնքի ավագանու 2022 թվականի դեկտեմբերի 28-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքի 2023 թվականի բյուջեն հաստատելու մասին» N 199-Ն որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝
1) որոշման 2-րդ կետի 2-րդ ենթակետում «3 810 000.0» թիվը փոխարինել «5 417 963.9» թվով, 3-րդ ենթակետում «0.0» թիվը փոխարինել «1 607 963.9» թվով,
2) որոշման 3-րդ կետում «0.0» թիվը փոխարինել «1 607 963.9» թվով,
3) որոշմամբ հաստատված N 2 – N 7 հավելվածները շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն N 1 – N 6 հավելվածների:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-19 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 02-Ն/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ԹԻՎ 10 ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԱՆՆԱ ՉՈԲԱՆՅԱՆ/

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 67-68-րդ հոդվածների, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 15-րդ կետի, «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին» օրենքի 9-րդ հոդվածի 5-րդ մասի 2-րդ պարբերության, 13-րդ հոդվածի 2-րդ մասի, 25-րդ հոդվածի 1-ին և 2-րդ

մասերի, Աբովյան համայնքի ղեկավարի 2022 թվականի դեկտեմբերի 19-ի N 638 կարգադրության և հիմք ընդունելով համայնքի ղեկավարի առաջարկը, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. Լուծարել Աբովյան համայնքի «Աբովյան քաղաքի թիվ 10 մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությունը:
2. Համայնքի ղեկավարին՝ օրենքով սահմանված կարգով և ժամկետներում ստեղծել լուծարման հանձնաժողով, հաստատել լուծարման միջանկյալ հաշվեկշիռը և լուծարման հաշվեկշիռը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Քննարկվեցին մանկապարտեզի լուծարմանը հանգեցրած հանգամանքներն ու պատճառները: Զեկուցողի կողմից նշվեց, որ ի թիվս այլ խնդիրների (մարդկային և ֆինանսական ռեսուրսների արդյունավետ կառավարում) առկա է շենքի ֆիզիկական անմխիթար վիճակի հանգամանքը՝ տանիք, պատեր, որն ամեն պահի կարող է փլուզվել՝ հանգեցնելով արտակարգ իրավիճակի:

Վ. Առաքելյանը բարձրացրեց մանկապարտեզի գործունեության ժամանակավոր դադարեցման տարբերակը, որը մերժվեց, քանի որ գործող օրենսդրությամբ նման կարգավորումներ առկա չեն:

Քննարկվեցին նաև ծնողներին և սաներին պատճառվելիք հնարավոր անհարմարությունների վերաբերյալ հարցեր: Զեկուցողը տեղեկացրեց, որ լուծարվող կազմակերպության որևէ սան դրսում չի մնա, բոլորն էլ կտեղավորվեն համայնքի այլ մանկապարտեզներում, որտեղ առկա են ազատ տեղեր: Նույնն ասվեց նաև մանկապարտեզի աշխատակիցների մասով: Մանկավարժական անձնակազմը կտեղավորվի համայնքի մյուս մանկապարտեզներում, իսկ պահակները կշարունակեն աշխատել՝ պահպանելով լուծարված կազմակերպության շենքը և գույքային միավորները, մինչև համայնքը գտնի շենքի կապիտալ վերանորոգման համար համապատասխան ներդրողներ ու միջոցներ:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-13 Դեմ-7 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 03-Ա/

Ավագանու անդամ Նաիրա Մելիքյանը դահլիճ մտավ նախագծի քննարկման ծամանակ:

Լսեցին

ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՎՐԱ ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՆ ՕՏԱՐԵԼՈՒ ԿԱՄ ՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Աբովյան համայնքի ղեկավարի 2022 թվականի դեկտեմբերի 19-ի N 638 կարգադրության, Աբովյան համայնքի ավագանին ***որոշում է՝***

1. 2023 թվականի ընթացքում օտարել կամ վարձակալության իրավունքով տրամադրել իրավահարաբերության պահին գործող Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի 2-րդ մասի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 731-Ն որոշման համաձայն համայնքային սեփականություն ճանաչված և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ սահմանված կարգով օրինականացված ինքնակամ կառուցված բնակելի և հասարակական նշանակության կառույցները՝ համաձայն հավելվածի:
2. Սահմանել, որ Աբովյան համայնքի սեփականություն ճանաչված ինքնակամ կառույցներն ուղղակի վաճառքի կարգով գնման նախապատվության իրավունքով դրանք իրականացրած անձանց օտարման, իսկ գնման նախապատվության առաջարկը չընդունելու դեպքում՝ վարձակալության իրավունքով տրամադրման գործընթացն իրականացնում է Աբովյան համայնքի ղեկավարը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ սահմանված կարգով և գներով:
3. Ինքնակամ կառույցն իրականացրած անձանց կողմից գնման, իսկ այնուհետև վարձակալության իրավունքով տրամադրելու նախապատվության առաջարկը չընդունելու դեպքում գույքն աճուրդային կարգով օտարելու մեկնարկային գինը սահմանվում է անշարժ գույքի գնահատման գործունեություն իրականացնող լիցենզավորված անձի կողմից գնահատված շուկայական արժեքի չափով, իսկ վարձակալության իրավունքով տրամադրելու դեպքում՝ մրցույթի պայմաններում, որպես մեկնարկային գին սահմանվում է ավագանու կողմից ընդունված վարձավճարի (վճարի) չափը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 04-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՊՏՂՆԻ ԳՅՈՒՂՈՒՄ ԳՏՆՎՈՂ 07-054-0331-0079 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐՈՎ, 0.11697 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ԵՎ 07-054-0331 ԿԱԴԱՍՏՐԱՅԻՆ ԾԱԾԿԱԳՐԻՑ, 0.00408 ՀԵԿՏԱՐ ՄԱԿԵՐԵՍՈՎ ՀՈՂԱՄԱՍԵՐԻ ՆՊԱՏԱԿԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅՈՒՆԸ ՓՈՓՈԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն Հողային օրենսգրքի 3-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 42-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1918-Ն որոշմամբ հաստատված կարգի 17-րդ կետի, Աբովյան համայնքի ղեկավարի 2022 թվականի դեկտեմբերի 19-ի N 638 կարգադրության, հաշվի առնելով Արթին Սիրոժի Դերքեշիշյանի դիմումը (մուտք՝ 2022 թվականի սեպտեմբերի 26-ի N Ք-4835) և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության հողերի օգտագործման ժամանակավոր սխեմաների համաձայնեցման միջգերատեսչական հանձնաժողովի 2022 թվականի դեկտեմբերի 12-ի N 152 դրական եզրակացությունը, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է.***
1. Արթին Դերքեշիշյանին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2020 թվականի սեպտեմբերի 15-ի N 15092020-07-0106 սեփականության իրավունքի գրանցման վկայական, կադաստրային ծածկագիր՝ 07-054-0331-0079) Աբովյան

համայնքի Պտղնի գյուղում գտնվող 0.11697 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասի:
2. Աբովյան համայնքի սեփականություն հանդիսացող Պտղնի գյուղում գտնվող կադաստրային ծածկագիր՝ 07-054-0331-ից 0.00408 հեկտար մակերեսով գյուղատնտեսական նշանակության հողամասի նպատակային նշանակությունը փոփոխել բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասի:
3. Արթին Դերքեշիշյանը պարտավոր է Աբովյանի համայնքապետարանի 900105201363 հաշվեհամարին վճարել 5 195 574 (հինգ միլիոն հարյուր իննսունհինգ հազար հինգ հարյուր յոթանասունչորս) դրամ՝ 0.11697 հեկտար մակերեսով հողամասի նպատակային նշանակության փոփոխման պահին առկա կադաստրային արժեքների տարբերությունը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում որոշման ընդունման մասին իրազեկելու օրվան հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 05-Ա/

Լսեցին
ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ «ՄԱՅԱԿՈՎՍԿԻ ԳՅՈՒՂԻ «ՁԵՓՅՈՒՌ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ» ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/Զեկ. ԵՂԻՇԵ ԱՎԵՏԻՍՅԱՆ/

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, 102-րդ հոդվածի 3.2-րդ մասի, Քաղաքացիական օրենսգրքի 685-699-րդ հոդվածների, Հողային օրենսգրքի 75-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, Աբովյան համայնքի ղեկավարի 2022 թվականի դեկտեմբերի 19-ի N 638 կարգադրության, Աբովյան համայնքի ավագանին ***ո ր ո շ ու մ է՝***
1. Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Աբովյան համայնքին սեփականության իրավունքով պատկանող (հիմք՝ 2022 թվականի դեկտեմբերի 23-ի N 23122022-07-0033 վկայական) Աբովյան համայնքի Մայակովսկի գյուղի 10-րդ փողոցի թիվ 10/1 հասցեում գտնվող անշարժ գույքը և դրա պահպանման ու սպասարկման համար առանձնացված հողամասն անորոշ ժամկետով, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել Աբովյան համայնքի «Մայակովսկի գյուղի «Ձեփյուռ» մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպությանը՝ նպատակային նշանակությամբ օգտագործելու համար:
2. Առանց համայնքի ավագանու համաձայնության չի թույլատրվում անշարժ գույքը հանձնել երրորդ անձի օգտագործմանը, ինչպես նաև իրականացնել քաղաքաշինական գործունեություն:
3. Հանձնարարել Աբովյան համայնքի «Մայակովսկի գյուղի «Ձեփյուռ» մանկապարտեզ» համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝ ապահովել որոշման կատարումը:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Որոշման նախագծի վերաբերյալ ավագանու մշտական հանձնաժողովը տվել է դրական եզրակացություն:

Կողմ-20 Դեմ-0 Ձեռնպահ-0

Որոշումն ընդունված է. /կցվում է որոշում N 06-Ա/

Ավագանու անդամներ

ՎԼԱԴԻՄԻՐ ԱՌԱՔԵԼՅԱՆ

ՍԵԴԱ ԱՎԵՏԻՍՅԱՆ

ՌԱԶՄԻԿ ԱՐԶՈՒՄԱՆՅԱՆ

ԱՏՈՄ ԲԱԴԱԼՅԱՆ

ԱՄԱԼՅԱ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՄԵԼԻՆԵ ԳԱՍՊԱՐՅԱՆ

ՆՈՐԱՅՐ ՁԱՐԳԱՐՅԱՆ

ՆԱԻՐԱ ՄԵԼԻՔՅԱՆ

ԴԱՎԻԹ ՁԱՐՈՅԱՆ

ԱՆԻ ԹԵՆԵՔԵՋՅԱՆ

ՀԱՍՄԻԿ ԽԱՉԱՏՐՅԱՆ

ԷԴՎԻՆ ԿԱՐԱՊԵՏՅԱՆ

ՆԱԻՐԻ ՀԱԿՈԲՅԱՆ

ՄԱՐԳԱՐԻՏԱ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ՎԱՀԵ ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

ԱՐՄԱՆ ՄԵՂՐՅԱՆ

ԱՍՊՈՒՐԱԿ ՊԵՏՐՈՍՅԱՆ

ՊԱՎԵԼ ՅՈՒԳՈՒՆՅԱՆ

ԱՐՄԵՆ ՔՈՍԱԿՅԱՆ

ԳՈՒՐԳԵՆ ՕՍԻՊՅԱՆ

Համայնքի ղեկավարի 1-ին տեղակալ

ԴԱՎԻԹ ՋԱՐՈՅԱՆ_____